# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
## ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2018 թ. սեպտեմբերի 14-ի թիվ 1 նիստի

__ԼՍԵՑԻՆ.-__ «Ժուռնալիստի վարպետություն» մասնագիտական դասընթացի արդյունավետ կազմակերպման մասին դեկան Ն. Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

__ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-__ *Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Շ. Ավետիսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Լ. Է. Մինասյան, Լ. Ա. Հարությունյան:*

__ՈՐՈՇԵՑԻՆ.-__ ա) «Ժուռնալիստի վարպետություն» մասնագիտական դասընթացը գնահատելիս հաշվի առնել ուսանողի հրապարակումները journalist.am-ում կամ այլ լրատվամիջոցներում:

բ) Հրապարակումների բացակայության դեպքում ուսանողի ավարտական գնահատականը չի կարող 18-ից բարձր լինել:

__ԼՍԵՑԻՆ.-__ Լուծարքային առաջին շրջանի կազմակերպման և արդյունքների մասին դեկանի տեղակալ Ա. Ռ. Մենեմշյանի հաղորդումը:

__ԼՍԵՑԻՆ.-__ «Հարություն քահանա Շմավոնյան» անվանական կրթաթոշակը հատկացնելու հարցը:

__ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-__ *Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Լ. Է. Մինասյան:*

__ՈՐՈՇԵՑԻՆ.-__ Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման չորրորդ կուրսի շնորհալի ուսանողուհի Թամարա Ավետիքի Գասպարյանին՝ 2018 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019 թ. մարտի 1-ը ստանալու «Հարություն քահանա Շմավոնյան» անվանական կրթաթոշակը:

**ԼՍԵՑԻՆ.-** «Արտաշես Քալանթարյան» անվանական կրթաթոշակը հատկացնելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** *Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Լ. Է. Մինասյան:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման չորրորդ կուրսի շնորհալի ուսանողուհի Աննա Սպարտակի Կոստանյանին՝ 2018 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019 թ. մարտի 1-ը ստանալու «Արտաշես Քալանթարյան» անվանական կրթաթոշակը:

**ԼՍԵՑԻՆ.-** Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստական աշխատանքների մասին ամբիոնների վարիչներ Դ.Վ.Պետրոսյանի, Մ. Մ. Հովսեփյանի հաղորդումը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** *Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Լ. Է. Մինասյան:*

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հոկտեմբերի 1-ից ամբիոններում կազմակերպել ամենամսյա հանդիպումներ՝ ավարտական կուրսերի ուսանողների և իրենց ղեկավարների մասնակցությամբ:

**ԼՍԵՑԻՆ.-** «Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ» մագիստրոսական ծրագրի ղեկավար Ա. Շ. Ավետիսյանի հաղորդումը՝ տեսական և գործնական պարապմունքների, նաև՝ պրակտիկայի կազմակերպման հնարավորությունների մասին:

**ԼՍԵՑԻՆ.-** ԵՊՀ 100, ԵՊՀ-ում ժուռնալիստիկայի բաժնի ստեղծման 70 և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի կազմավորման 20-ամյակներին նվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների մասին Ն. Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

**<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-</u>** *Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան:*

**<u>ՈՐՈՇԵՑԻՆ.-</u>** **ա)** Ստեղծել ԵՊՀ-ում ժուռնալիստիկայի բաժնի ստեղծման 70 և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի կազմավորման 20-ամյակներին նվիրված միջոցառումները համակարգող կազմկոմիտե:

**բ)** Դիմել ԵՊՀ ռեկտորատ հոբելյանական միջոցառումները ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումների ցանկում ներառելու խնդրանքով:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ